



**Կարգապահական գործ թիվ ԿԳ-15020**

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի խորհրդի  
2015 թվականի ապրիլի 15-ի թիվ 85-րդ ԿԳ նիստի

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ ԹԻՎ ԿԳ/61-Ա**

**ՓԱՍՏԱԲԱՆ ԳԱՅԱՆԵ ԶԱՔԱՐՅԱՆԻՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ  
ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՀԱՐՑԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ  
(ԱՆԴԱՄԱՎՃԱՐԻ ԳՈՐԾՈՎ)**

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի (**այսուհետ նաև՝ Պալատ**) խորհուրդը (**այսուհետ նաև՝ խորհուրդ**), նիստը նախագահող՝ Լուսինե Սահակյանի, խորհրդի անդամներ՝ Կարապետ Աղաջանյանի, Սիմոն Բաբայանի, Տիգրան Խուրշուդյանի, Նելլի Հարությունյանի, Լիպարիտ Սիմոնյանի, Ալեքսանդր Սիրունյանի, Երվանդ Վարոսյանի, Մարտուն Փանոսյանի կազմով,

քարտուղարությամբ՝ Նոննա Համբարձումյանի,  
քննության առնելով փաստաբան Գայանե Զաքարյանին (արտոնագիր թիվ 432) կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ հարցը,

**Պ Ա Ր Զ Ե Ց՝**

**1. Կարգապահական վարույթ հարուցելու առիթը և հիմքը.**

Համաձայն ՀՀ փաստաբանների պալատի գլխավոր հաշվապահի կողմից ՀՀ փաստաբանների պալատի նախագահին 17.02.2015թ. տրամադրված տեղեկանքի փաստաբան Գայանե Զաքարյանն ունի 30.000 ՀՀ դրամ գումարի չափով անդամավճարի մուծման չկատարված պարտավորություն՝ 2014թ. օգոստոսից մինչև 2015թ. հունվար (ներառյալ) ամիսների համար:

**2. Կարգապահական վարույթ հարուցելու մասին որոշումը.**

17.02.2015թ. ՀՀ փաստաբանների պալատի նախագահի թիվ 50-Ա/ԿԳ-15020 որոշմամբ կարգապահական վարույթ է հարուցվել փաստաբան Գայանե Զաքարյանի նկատմամբ՝ «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի և «Փաստաբանի վարքագծի կանոնադրքի» 2.9.1 կետի խախտման հատկանիշներով:

20.02.2015թ.-ին կարգապահական գործը հանձնվել է Պալատի խորհրդին:

Խորհրդի նիստը տեղի է ունեցել 2015 թվականի ապրիլի 15-ին, ժամը՝ 18:52-ին, ՀՀ փաստաբանների պալատի վարչական շենքում (ք.Երևան, Զաքիյան 2, 4-

որ հարկ, թիվ 12 սենյակ):

### **3. Պատասխանողի համառոտ բացատրությունները.**

*Պատասխանողի կողմից որևէ բացատրություն չի ներկայացվել:*

### **4. Գործի հանգամանքները՝ առկա ապացույցների վկայակոչմամբ.**

Վարույթին կցված են ՀՀ փաստաբանների պալատի գլխավոր հաշվապահի կողմից 17.02.2015թ. և 15.04.2015թ. տրամադրված տեղեկանքներն, առ այն, որ փաստաբան Արամ Ներսիսյանն ունեցել է 30.000 ՀՀ դրամ գումարի չափով անդամավճարի մուծման չկատարված պարտավորություն՝ 2014թ. օգոստոսից մինչև 2015թ. հունվար (ներառյալ) ամիսների համար, որը ամբողջությամբ վճարել է 23.03.2015թ.:

### **5. Պատասխանողի անձը բնութագրող հանգամանքները.**

*Պատասխանողի նկատմամբ նույնանման խախտում կատարելու փաստով նախկինում 8 անգամ հարուցվել են կարգապահական վարույթներ, որոնցից մեկով 21.05.2013թ. պատասխանողը ենթարկվել է պատասխանատվության, որը մարված է, իսկ մյուսները (վերջինը՝ 10.10.2014թ.) կարճվել են՝ արտոնություն կիրառվելու հիմքով:*

### **6. Պալատի խորհրդի պատճառաբանված եզրակացությունը և որոշումը.**

***Հիմք ընդունելով Պալատի խորհրդի կողմից հաստատված փաստերը, դրանք հիմնավորող գործում առկա ապացույցները և քննարկվող իրավահարաբերությունները կարգավորող կանոնները, Պալատի խորհուրդը գտնում է, որ փաստաբան Գայանե Զաքարյանին պետք է ենթարկել կարգապահական պատասխանատվության հետևյալ պարճառաբանությամբ.***

Պալատի խորհուրդը կրկին հիշեցնում է, որ անդամավճարը հանդիսանում է Պալատի ընդհանուր պահանջմունքների և փաստաբանական գործունեության իրականացման հետ կապված այլ ծախսերի համար անհրաժեշտ միջոց, առանց որի Պալատը չի կարող արդյունավետ կազմակերպել իր աշխատանքները:

«Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 17 հոդվածի համաձայն. «Փաստաբանը փաստաբանների պալատի սահմանած չափով և կարգով մուծում է անդամավճար՝ փաստաբանների պալատի ընդհանուր պահանջների և փաստաբանական գործունեության իրականացման հետ կապված այլ ծախսերի համար», 19 հոդվածի 5-րդ կետի համաձայն՝ փաստաբանը պարտավոր է մուծել անդամավճար:

Փաստաբանի վարքագծի կանոնագրքի 2.9.1 կետի համաձայն՝ Փաստաբանը պարտավոր է սահմանված կարգով և չափով Պալատին վճարել անդամավճար, իսկ Պալատի Կանոնադրության 20.18 կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ Փաստաբանների պալատի անդամը պարտավոր է՝ ... Փաստաբանների պալատի

խորհրդի կողմից սահմանված ժամկետներում և հաստատված չափով մուծել մուտքավճար, անդամավճար և վերապատրաստման համարվճար.

Վերը նշված նորմերի և կանոնների համաձայն՝ անդամավճարի մուծման ուշացումը հանդիսանում է «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 17, 19 հոդվածների, Փաստաբանի վարքագծի կանոնագրքի 2.9.1 կետի և Պալատի կանոնադրության 20.18 կետի 4-րդ ենթակետի պահանջների խախտում:

Համաձայն ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի 26.12.2013թ.-ին թիվ 33/6-Լ որոշմամբ ընդունված «Անդամավճարների, մուտքի և այլ վճարների վճարումների վերաբերյալ» կարգի (**այսուհետև Կարգ**) 7-րդ կետի՝ Փաստաբանները յուրաքանչյուր ամսվա համար անդամավճարների վճարումը կատարում են հաշվետու ամսվան հաջորդող ամսվա մինչև տասնհինգը, իսկ նույն Կարգի 21-րդ կետով սահմանվում է՝ «Ամենամսյա վճար վճարելու պարտականությունը խախտելու համար փաստաբանը կամ օգնականը ենթակա են կարգապահական պատասխանատվության:»:

Կարգապահական տույժի տեսակն ընտրելիս, Պալատի խորհուրդը հաշվի է առնում այն հանգամանքը, որ՝ փաստաբան Գայանե Զաքարյանը նախկինում նմանատիպ խախտման համար կարգապահական պատասխանատվության չի ենթարկվել, սակայն նրա նկատմամբ կիրառվել է արտոնություն:

Ելնելով վերոշարադրյալից և ղեկավարվելով «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 5-րդ մասի, 39-րդ հոդվածի 1-ին մասի, 39.7. հոդվածի 5-րդ մասի, 39.9. հոդվածի, «Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի կանոնադրության» 16.26-րդ կետի, «Փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթի իրականացման» կարգի 30-րդ հոդվածի 5-րդ մասի պահանջներով Խորհուրդը՝

### **Ո Ր Ո Շ Ե Ց՝**

**1. Փաստաբան Գայանե Զաքարյանին (արտոնագիր թիվ 432) ճանաչել մեղավոր «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի և «Փաստաբանի վարքագծի կանոնագրքի» 2.9.1. կետի պահանջների խախտման համար:**

**2. Փաստաբան Գայանե Զաքարյանի (արտոնագիր թիվ 432) նկատմամբ կիրառել կարգապահական տույժ՝ նկատողություն:**

**3. Հանձնարարել Պալատի աշխատակազմի ղեկավարին՝ սույն որոշման մասին իրազեկել փաստաբան Գայանե Զաքարյանին :**

**Ծանոթություն.** Սույն որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով՝ այն ստանալու օրվանից մեկամսյա ժամկետում: Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում սույն կետով նախատեսված բողոքարկման ժամկետն անցնելուց հետո: